

ԿԱՐԾԻՔ
ՄՏԵՓԱՆ ՀԱՍԱՆ-ՉԱԼԱԼՅԱՆԻ
«ՀԱՍԱՆ-ՉԱԼԱԼՅԱՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՏՈՀՄԻ ԴԵՐՈ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ XIII-XVI
ԴԱՐԵՐՈՒՄ» ՎԵՐՏԱՌՈՒԹՅԱՄԲ
Է.00.01 «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ
ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հասան-Չալալյան տոհմի դերը խիստ ընդգծված է Հայոց արևելից կողմանց պատմության մեջ: Տոհմի տարբեր ներկայացուցիչներ ունեցել են նաև համահայկական դերակատարություն: Նշված պատճառներով Հասան-Չալալյանների տոհմի ծագումը, գործունեությունն ու պատմության մեջ ունեցած դերակատարության հարցերը հետաքրքրել են բազմաթիվ հետազոտողների, որոնք խնդրին անդրադարձել են տարբեր ժամանակային, տարածական և բովանդակային ընդգրկմամբ:

Սակայն աղբյուրագիտական նորահայտ նյութերը հնարավորություն են տալիս էլ ավելի խորամուխ լինելու խնդրի տարբեր ծալքերում և բացահայտելու իրողություններ, որոնք նախկինում հասու չեն եղել ուսումնասիրողներին:

Պատահական չէ, որ այսօր էլ ուսումնասիրողներին հետաքրքրում են Հասան-Չալալյան տոհմի պատմության և դերակատարության հարցերը:

Ստեփան Ռուբենի Հասան-Չալալյանի ատենախոսությունը նվիրված է Հասան-Չալալյան տոհմի՝ XIII-XVI դարերում Հայոց պատմության մեջ ունեցած դերի ներկայացմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսության աղբյուրային և հետազոտական հենքը բավարար է՝ լիարժեք գիտական ուսումնասիրություն իրականացնելու համար:

Առաջին գլխում («Հասան-Չալալյան իշխանական տոհմի ծագումը») ատենախոսն անդրադարձել է Հասան-Չալալյանների ծագման խնդիրներին՝ սկսելով հնագույն շրջանի վերաբերյալ տեղեկությունների քննությունից: Ատենախոսը Բ. Ուլուբաբյանի օրինակով Հասան-Չալալյաններին համարում է սերված Առանշահիկների տոհմից: Այս գլխում ատենախոսը խոսել է նաև Հասան-Չալալյան տոհմի անվանադիր նախնու՝ Հասան-Չալալ-Դոլայի նախորդների մասին:

Ատենախոսության երկրորդ գլխում («Արցախի իշխանաց-իշխան Հասան-Չալալ-Դոլայի գործունեությունը (XIII դար)») ատենախոսը քննության է առել իշխանաց իշխանի

շինարարական գործունեությունը, նրա վարած արտաքին քաղաքականությունը և ի վերջո անդրադարձել նրա մահվանն ու գործունեության գնահատականին:

Ատենախոսության երրորդ գլխում («Հասան-Ջալալյանների գործունեությունը XIV-XV դարերում») ատենախոսը քննության է առել Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցիչների գործունեությունը երկու դարերի ընթացքում: Ատենախոսը զբաղվել է նաև տոհմի մի քանի ներկայացուցիչների հստակեցմամբ և գործունեության լուսաբանմամբ:

Ատենախոսության չորրորդ գլխում («Հասան-Ջալալյանների աշխարհիկ իշխանության փոխակերպման գործընթացը») ատենախոսի ուշադրությունը բնեռվել է մելիքության, որպես կառավարման նոր ինստիտուտի ծագմանը, ինչպես նաև «մելիք» տիտղոսով առաջինը կոչված Հասան-Ջալալյանի անձի ճշգրտմանը: Այստեղ նա անդրադարձել է նաև Հասան-Ջալալյան տոհմի մի շարք աշխարհիկ ու հոգևոր ներկայացուցիչների:

Հավելվածում ներկայացված է Հասան-Ջալալյան իշխանական տան տոհմաճառը XIII-XVI դարերում:

Ատորև շարադրենք մեր դիտարկումները՝ ներկայացնելով նաև հաջողված հատվածները:

1. Ատենախոսության բովանդակությունը առաջացնում է հարցեր և մասնավորապես այն, որ չորս գլուխներից միայն երկրորդն ունի ենթագլուխներ: Մինչդեռ հատկապես երրորդ և չորրորդ գլուխներն անհրաժեշտ էր բաժանել, երրորդը՝ ըստ աշխարհիկ և հոգևոր ճյուղերի, իսկ չորրորդը՝ աշխարհիկ իշխանության փոխակերպման էության, «մելիք» տիտղոսի ստուգաբանության և այն առաջինը կրած անձի պարզաբանման վերաբերյալ ենթագլուխների:

2. Տեքստում, բացի մեր կողմից ատենախոսության դրական կողմերի մասին կետում (կետ 22) նշված հատվածների, հեղինակային խոսք գրեթե չկա: Դա հատկապես զգացվում է այն ժամանակ, երբ ատենախոսության առանձին հատվածներում անհրաժեշտ է հեղինակային խոսք, տարբեր հատվածներում անհրաժեշտ է համոզիչ կերպով ամփոփել կամ ներկայացնել տիրող իրավիճակը, բայց ատենախոսն այդ անում է այլ հետազոտողների կարծիքների՝ հիմնականում ուղղակի մեջբերմամբ՝ առանց խնդրի և այդ կարծիքների վերաբերյալ սեփական վերաբերմունքն արտահայտելու: Նման դեպքերը տե՛ս. էջ 14՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 25՝ Վ. Բալայանի կարծիքը, էջ 26՝ Հ. Աճառյանի կարծիքը, էջ 31՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 33՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 38՝ Ս. Բարխուդարյանի կարծիքը, էջ 39՝ Լեոյի և Բ. Ուլուբաբյանի կարծիքները, էջ 40՝ Լ. Խաչիկյանի, Գ. Գրիգորյանի և Ս. Հախվերդյանի կարծիքները, էջ 41՝ Ա. Յակոբսոնի, Շ. Մկրտչյանի, Բ. Ուլուբաբյանի կարծիքները, էջ 43՝ Հ. Մանանդյանի կարծիքը, էջ 44՝ Հ. Մանանդյանի կարծիքը, էջ 48՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 51՝ Վ. Մուրաֆյանի և Է. Դանիելյանի կարծիքները, էջ 52՝ Գ. Միքայելյանի կարծիքը, էջ 53՝ Վ. Մուրաֆյանի, Լ. Տեր-

Պետրոսյանի, Է. Դանիելյանի կարծիքները, էջ 54՝ Լ. Տեր-Պետրոսյանի կարծիքը, էջ 58՝ Բ. Ուլուբաբյանի և Բ. Կարապետյանի կարծիքները, էջ 68՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, 78՝ Ա. Մանասյանի կարծիքը, էջ 84՝ Գ. Կիրակոսյանի կարծիքը, էջ 87՝ Բ. Ուլուբաբյանի և Գ. Կիրակոսյանի կարծիքները, էջ 89՝ Գ. Կիրակոսյանի կարծիքը, էջ 95՝ Գ. Կիրակոսյանի կարծիքը, էջ 97՝ Գ. Կիրակոսյանի կարծիքը, էջ 99՝ Ս. Բալայանի, Ռ. Հյուսրնի, Գ. Կիրակոսյանի կարծիքները, էջ 104-105՝ Խ. Սամուելյանի կարծիքը, էջ 105՝ Լեոյի կարծիքը, 120՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 121՝ Ղ. Ալիշանի կարծիքը, էջ 122՝ Բ. Ուլուբաբյանի և Լեոյի կարծիքները, էջ 126՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 127՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը, էջ 128՝ Բ. Ուլուբաբյանի կարծիքը):

3. Աղբյուրագիտական նյութից կատարված ընդարձակ մեջբերումները գրեթե միշտ կատարված են անհիմն կերպով ընդարձակ, և աստենախոսը իսպառ չի բացատրել կամ ոչ ամբողջությամբ է լուսաբանել դրանց նշանակությունն ու իմաստը: Օրինակ, աղբյուրներից անհիմն ընդարձակ մեջբերումներ են կատարվել հետևյալ էջերում և հետևյալ ծավալներով. էջ 13-14՝ կես էջ, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 15՝ 1/3 էջ, նշանակությունը բացահայտված չէ, էջ 15-16՝ մի քանի տող, նշանակությունը բացահայտված չէ, էջ 18՝ 1/3 էջ, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 22՝ 1/3 էջ, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 24՝ 8 տող, որոնց փոխարեն բավարար կլիներ նշելը, որ ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հասան-Ջալալ-Դոլան եղել է բարեպաշտ անձ, էջ 34-35՝ 1/3 էջից ավելի, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 35-36՝ 1 էջ, նշանակությունը բացահայտված չէ, թեև կարիքը կար, էջ 37՝ 5 տող, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 43՝ 8 տող, նշանակությունը բացահայտված չէ, էջ 43-44՝ գրեթե 2/3 էջ, նշանակությունը բացահայտված չէ, էջ 55՝ 1/3 էջ, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 67՝ 1/3 էջ, նշանակությունը բացահայտված չէ, էջ 71-72՝ 6 տող, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 80՝ նշանակությունը չի բացահայտված, էջ 82՝ հիշատակությունների նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 83՝ հիշատակությունների նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 86՝ նշանակությունը բացահայտված չէ, էջ 87-88՝ կես էջից ավելի, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 89-90՝ հիշատակությունների նշանակությունը բացահայտված չէ, էջ 91՝ գրեթե 1 էջ, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 92-93՝ 1 էջ ընդգրկող մի քանի վավերագրերի նշանակությունը բացահայտված չէ, էջ 104՝ նշանակությունը բացահայտված է մասնակիորեն, էջ 111-112՝ ավելի քան 10 տող, նշանակությունը բացահայտված է, բայց անիջապես մեջբերված են նույն այդ վավերագրի արդեն բերված 5 տող, էջ 114՝ նշանակությունը բացահայտված չէ, էջ 120՝ նշանակությունը բացահայտված չէ, էջ 124-125՝ վավերագրերի նշանակությունը բացահայտված չէ, էջ 125-126՝ գրեթե 1 էջ, նշանակությունը բացահայտված է մասնակիորեն:

4. Թեև ատենախոսության նպատակը (տե՛ս վերնագիրն ու «Ներածության» 4-րդ էջը) Հասան-Չալալյան տոհմի՝ Հայոց պատմության մեջ ունեցած դերի արժևորումն է, բայց հեղինակը այդ խնդրով գրեթե չի զբաղվել. բացառություն է միայն Հասան-Չալալ-Դոլայի պարագան: Այս իրողությունը հատկապես ակնառու է «Եզրակացություններում», որտեղ առկա ութ եզրակացություններից միայն երկրորդն է վերաբերվում Հասան-Չալալյան տոհմի դերի հարցին և այն էլ՝ բացառապես Հասան-Չալալ-Դոլայի պարագայում: Այս առումով լիովին անիմաստ է խնդիրների բաժնում երրորդ («Ճշգրտել Արցախի իշխանաց իշխան Հասան-Չալալ-Դոլայի 1259 թ. Վրաստանում սկսված հակամոնղոլական ապստամբությանը մասնակցություն ունենալու հարցը») և հինգերորդ («Ճշգրտել Արցախի իշխանաց իշխան Հասան-Չալալ-Դոլայի գերեզմանի գտնվելու հնարավոր վայրը») խնդիրները, քանի որ դրանք դուրս են ատենախոսության շրջանակներից և որևէ կերպ չեն նպաստում ընդհանուր նպատակի իրականացմանը:

5. Ատենախոսության գիտական նորույթի բաժնում (էջ 5) բերված և որպես նոր ներկայացվող հայեցակետերը (ա. «...այս տունը ունեցել է ռազմաքաղաքական այնպիսի գործելաճ, որն արդյունավետ է եղել ոչ միայն Արցախի, այլև համայն հայության շահերի տեսանկյունից»; բ. «նոր հայեցակետեր են մշակված մասնավորապես՝ Հասան-Չալալյան իշխանական տոհմի անվանադիր՝ Արցախի իշխանաց իշխան Հասան-Չալալ-Դոլայի գործունեության վերաբերյալ, ճշգրտված են Հասան-Չալալյան տոհմի որոշ իշխանների ու կաթողիկոսների ծննդյան, պաշտոնավարման և մահվան տարեթվերը») նոր համարվել չեն կարող, քանի որ Հասան-Չալալյան տոհմի ընդհանրական և ըստ իշխանների ու կաթողիկոսների՝ մասնավոր գործունեության համահայկականության մասին խոսվել է բազմիցս՝ տարբեր հետազոտողների կողմից (տե՛ս ատենախոսության էջ 8-11-րդ էջերում ներկայացված գրականության ցանկը), իսկ «որոշ իշխանների ու կաթողիկոսների ծննդյան, պաշտոնավարման և մահվան տարեթվերի» ճշգրտումը, նույնիսկ հիմնավոր լինելու դեպքում, չի կարող հավակնել հանդես գալու որպես ատենախոսության գոյության իրավունքը հիմնավորող նորույթ:

6. Ատենախոսության մեթոդաբանության մեջ (էջ 5-6) նշված է, որ «Ատենախոսությունը ստեղծվել է անտիպ և տպագիր սկզբնաղբյուրների, Հասան-Չալալյանների իշխանական տանն առնչվող հետազոտությունների օգտագործման արդյունքում»: Թե սա որքանով է առնչվում ատենախոսության մեթոդաբանությանը, հարց է, սակայն ատենախոսության ընթերցումից հետո պարզ է դառնում, որ այն սույն ատենախոսության առումով լիակատար ճշմարտություն է, քանի որ այդ ամենն իրոք օգտագործվել է և այն էլ՝ բառի բուն իմաստով: Ատենախոսության մեջ բազմաթիվ են աղբյուրային և վերլուծական նյութի հարկի ու անհարկի ծավալուն մեջբերման դեպքերը, որոնք մեծավ մասամբ արդարացված չեն (տե՛ս վերը՝ կետ 2-3): Որպես կանոն գիտական ուսումնասիրություններում «օգտագործվում» են տարբեր ուսումնասիրողների

հետազոտությունների արդյունքերը՝ համապատասխան հղումներով, քանի որ հետազոտության ուղղություններից մեկը այդ արդյունքերը ներկայացնելուց բացի դրանց դրույթներին համաձայնվելը, դրանք ժխտելը կամ դրանցում հավելումներ կատարելն է, իսկ Ս. Հասան-Ջալալյանը դրանք օգտագործել է հատկապես ամփոփումներ կատարելիս, այսինքն՝ ուրիշի խոսքով ամփոփել սեփական տեքստը, փաստորեն, մերթընդմերթ համաձայնելով այս կամ այն հետազոտողի տեսակետին, որով կամա թե ակամա ապացուցել է թեմայի՝ ընդհանուր առմամբ և մասնավորաբար լավագույնս ուսումնասիրված լինելը:

7. Ատենախոսի կարծիքով պատմաքննական մեթոդը նույնական է պատմավերլուծական մեթոդին, «որը հնարավորություն է տալիս պատմական իրադարձությունները ենթարկել տեսական ընդհանրացումների» (էջ 5-6): Իրականում պատմաքննական մեթոդն այլ կիրառական նշանակություն ունի: Ատենախոսության տեքստին ծանոթանալով՝ կարող եմ նշել, որ պատմաքննական մեթոդը իրոք պետք է օգտագործվեր ատենախոսի կողմից որպես հիմնական մեթոդ, բայց ճշգրիտ նշանակությամբ: Իսկ այն հանգում է պատմական տեքստերը (վավերագրեր) քննական վերլուծության ենթարկելուն: Մինչդեռ խնդրո առարկա ատենախոսությունը լի է առանց քննական մոտեցման մեջբերված աղբյուրային տեղեկություններով (տե՛ս վերը՝ կետ 2):

8. Էջ 18-ում 1212 թ. մի հիշատակարանում առկա՝ «...ես Վախտանգ եւ լծակից իմ Խորիշահ ... ծնաք երիս ուստերս եւ երիս դստերս ժառանկ մարմնաւոր եւ յիշատակ հոգեւոր» տեղեկությունից անհիմն կերպով բխեցրել է, թե իբր «յիշատակ հոգեւոր» արտահայտությունը նշանակում է, որ Վախթանգն ու Խորիշահը հիշատակարանի գրվելու պահին «ունեցել են մահացած զավակ, որի անունը չի նշվել հիշատակարանում»: Այդ միտքը նա պնդում է նաև էջ 20-ում: Իրականում «յիշատակ հոգեւոր»-ը տեքստում հակադրված է «ժառանկ մարմնաւոր»-ին, և քանի որ վերջինս վերաբերվում էր նրանց զավակներին, ապա «յիշատակ հոգեւորն» էլ պետք է վերաբերվեր նրանց կողմից «աշխարհ բերված» մեկ այլ՝ «հոգևոր զավակի»: Պատահական չէ, որ անմիջապես հետո հիշատակարանում գրված է, որ ամուսիններն վեց երեխաներ ունենալով ավելի նախանձախնդիր են դարձել և կառուցել են եկեղեցի, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ «յիշատակ հոգեւոր»-ը: Այստեղ կարևոր է նաև նշելը, որ ատենախոսը իր խոսքը՝ կապված Վախթանգի մահացած որդի Դուլայի հետ, ամբողջությամբ հիմնել է Բ. Ուլուբաբյանի հետազոտության արդյունքների վրա (տե՛ս Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 141, 175):

9. Էջ 31-33-ում ատենախոսը մանրամասնորեն ներկայացնում է Գանձասար անվանման ծագումն ու կառուցման ընթացքը, որը էական չէ ատենախոսության նպատակին հասնելու համար: Նմանապես, էջ 38-42-ում ատենախոսը, հիմնվելով բացառապես հետազոտողներից մի քանիսի կարծիքների վրա և նրանցից մեջբերումներ

կատարելով, անդրադառնում է Գանձասարի ճարտարապետության և դերի հարցերին, որը դուրս է նրա խնդիրներից:

10. Էջ 37-ում ներկայացված արձանագրության մեջ ատենախոսի ուշադրությունից վրիպել է այն, որ Հասան-Ջալալ-Դոլան իրեն կոչել է «կողմնակալ Ա[ց]ախա[յ]», որը շատ կարևոր է, բայց հեղինակը չի ներկայացրել նրա տիտղոսաշարում (էջ 71) և քննության չի առել:

11. Էջ 47-ում ատենախոսը գրում է. «Չարմաղանի գորքերը Հայաստան մտան Մուղանի կողմից՝ Գանձակի մոտով»: Իրականում Հայաստան են թե՛ Մուղանը և թե՛ Գանձակը (երկուսն էլ գտնվել են Ուտիքում), ուստի ստացվում է, որ թշնամին Հայաստան է մտել Հայաստանով, ինչը կոպիտ վրիպում է նման աշխատանքի համար:

12. Էջ 52-53-ում ատենախոսը գրում է, որ «Այսպիսով, ինչպես համոզվում ենք, Արցախի իշխանաց իշխանի (իմա՝ Հասան-Ջալալ-Դոլայի-Ա.Ե.) դիվանագիտական միջնորդության շնորհիվ Հայկական Կիլիկիան փրկվում է մոնղոլ-թաթարական մահասփյուռ արշավանքներից»: Այստեղ Հասան-Ջալալ-Դոլայի դերակատարությունը խիստ գերազնահատված է, և Կիլիկյան Հայաստանի փրկությունը մոնղոլ-թաթարական արշավանքներից վերագրված է նրա դիվանագիտական միջնորդությանը, թեև այդ նույն էջում մեջբերված՝ Կ. Մութաֆյանի, Լ. Տեր-Պետրոսյանի և Է. Դանիելյանի կարծիքները նրան պետք է հուշեին, որ Կիլիկյան Հայաստանի փրկությունը արդյունք էր նրա տիրակալի ճկունության, թեև Արցախի իշխանի միջնորդությունը շատ շահեկան էր:

13. Ամբողջ երկրորդ գլուխը (էջ 27-81) նվիրելով Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի գործունեությանը՝ գլխի վերջում, երբ կարծես ամեն ինչ ասված է, ատենախոսը որոշում է ապացուցել, որ «Արցախի իշխանաց իշխանը եղել է հենց ինքը՝ Հասան-Ջալալ-Դոլան» (էջ 76-77): Նա ներկայացնում է Վրաստանի ազգային թանգարանում պահվող թրի նեֆրիտե կոթի արձանագրությունը, որտեղ, սակայն, գրված է՝ «Հասան Ջալալ Իշխան Խաչենո»: Չնայած արձանագրությունը Հասան-Ջալալ-Դոլային ներկայացնում է որպես միայն Խաչենի իշխան, ատենախոսը դրանով համարում է, որ հիմնավորվել է Հասան-Ջալալ-Դոլայի՝ Արցախի իշխանաց իշխան լինելու հարցը, թեև տեքստը ունի այլ իմաստ և հավելյալ քննության կարիք:

14. Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը կոչվում է «Արցախի իշխանաց իշխանի ողբերգական վախճանն ու նրա գործունեության գնահատականը»: Սպասելի էր, որ այստեղ պետք է տրվեր Հասան-Ջալալ-Դոլայի գործունեության գնահատականը, բայց այդպես չէ: Հեղինակը, միայն կես էջ կազմող չորս պարբերությամբ և այն էլ՝ կիսով չափ Ա. Մանասյանի տեսակետի մեջբերումով ներկայացնելով նշված գնահատականը թերի և ոչ ամբողջական կերպով, դրա համար նախատեսված էջերը հատկացրել է Հասան-Ջալալյան տոհմի կաթողիկոսներին և Հասան-Ջալալ-Դոլայի զավակներին (էջ 78-81), թեև ենթագլուխը պետք է նվիրվեր բացառապես Հասան-Ջալալ-Դոլային: Ճիշտ կլիներ, եթե

Հասան-Չալալ-Դուլայի որդի Աթաբեկ-Իվանեի իշխանության շրջանը երկրորդ գլխի վերջում ներկայացնելու փոխարեն ներառվեր երրորդ գլխում և վերջինիս վերնագրում կատարվեր ժամանակագրական շրջանակի փոփոխություն՝ գլուխը սկսելով ոչ թե XIV դարից, այլ XIII դարի 60-ական թվականներից: Թեև նույնիսկ առկա դեպքում էլ երրորդ գլխի ժամանակագրական շրջանակը («Հասան-Չալալյանների գործունեությունը XIV-XV դարերում») սխալ է, քանի որ այնտեղ ընդգրկված են 1287 թվականից սկսած տեղի ունեցած իրադարձությունները (էջ 82-83):

15. Ատենախոսը 1287 թ. վախճանված Աթաբեկ-Իվանեից հետո իշխած Չալալին, որին Բ. Ուլուբաբյանը պարզապես Չալալ է կոչում (տե՛ս Բ. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 300-302), ներկայացնում է որպես Չալալ I (էջ 82-84), իսկ նրանից հետո մեծ ընդմիջումից հետո հիշատակված Իվանեին՝ Իվանե II: Այս տրամաբանությունն անհասկանալի է, քանի որ, եթե Աթաբեկ-Իվանեին և Իվանեին համարելով նույնանուն իշխողներ՝ հերթականությամբ թվագրում ես որպես առաջին և երկրորդ, ապա նույնը հարկ էր անել Հասան-Չալալի և Չալալի պարագայում՝ Հասան-Չալալին ներկայացնելով որպես առաջին, իսկ Չալալին՝ երկրորդ:

16. Ատենախոսության էջ 83-84-ում ներկայացված տեղեկությունները վերաշարադրված են Բ. Ուլուբաբյանի աշխատության 302 էջից, միայն ավելի ընդարձակ կերպով ներկայացված է Վարդանաթաղի գնման վերաբերյալ արձանագրությունը: Ի դեպ, այս էջերում ատենախոսը նույնությամբ կրկնել է նաև Բ. Ուլուբաբյանի գրքի նշված էջի ժամանակագրական և բովանդակային հերթականությունը և նույնիսկ նույնությամբ, առանց հղելու, ներկայացրել որդուն պապի անունով կոչելու հայկական սկզբունքը:

17. Այնուհետև ատենախոսը էջ 85-86-ում խոսում է Չազի կամ Չազայի մասին, որը ըստ նրա եղել է Խաչենի իշխանը: Նա այստեղ (էջ 85) հակադրվում է Գ. Կիրակոսյանին, ով կասկածի էր ենթարկել այն կարծիքը, որ XV դարի սկզբին Չալալի իշխանությունը ընդմիջվել է Չազայի 10-ամյա իշխանությամբ: Սակայն ճիշտ նույն կերպ է վարվել նաև Բ. Ուլուբաբյանը (տե՛ս նշվ. աշխ., էջ 305, ծանոթ. 46), ով, ի դեպ, սխալ է համարել Թովմա Սյունեցու հիշատակարանի այն տեղեկությունը, որ Չազան պարզապես եղել է Ծարի տանուտերերից մեկը: Այստեղ, Բ. Ուլուբաբյանի օրինակով Գ. Կիրակոսյանի տեսակետը ժխտելու փոխարեն, լավ կլիներ, եթե ատենախոսը փորձեր Չազայի անձը և նրա՝ Հասան-Չալալյանների շարքում իշխելու վարկածը մանրակրկիտ քննության ենթարկել: Ավելին, էջ 86-ում ատենախոսը պարզապես սխալ է մեկնաբանել «...իշել ի տեր զամենայն տանուտեարսն աստուածաշէն երկրիս Ծարայ, նախ Չազին» տեղեկությունը՝ այն մեկնաբանելով հետևյալ կերպ. «Ինչպես տեսնում ենք, Չազան այստեղ հանդես է եկել որպես Ներքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Ծարի բոլոր իշխանավորների գահերեցր»:
Մինչդեռ տեքստը թարգմանվում է այսպես. «Հիշել ի Տեր աստվածաշէն Ծար երկրի բոլոր տանուտերերին, նախ (առաջինը)՝ Չազին», ինչը նշանակում է, որ Չազան Ծարի

իշխանության տանուտերերից էր, այլ ոչ թե այն, որ նա «Ներքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Ծարի բոլոր իշխանավորների գահերեցն» էր: Ավելին, հեղինակի մեջբերած արձանագրություններից կարելի է բխեցնել, որ խնդրո առարկա անձի անունը ոչ թե Ջազա էր, այլ Ջազ: Բացի այդ, 1407 թ. արձանագրության մեջ «ի ... Ջազին» հաստվածը «Դիվան հայ վիմագրության» հատորաշարի 5-րդ պրակում կատարած վերակազմության հիմքով որպես «ի [տերութեան] Ջազին» վերականգնելու փոխարեն (ըստ Բ. Ուլուբաբյանի՝ «իշխանութեան Ջազին», էջ 305) կարելի էր մտածել «ի [տանուտերութեան] Ջազին» տարբերակի մասին: Իսկ եթե ատենախոսը համարում է, որ Ջալալի իշխանությունն իրոք ընդմիջվել է Ջազի կամ Ջազայի իշխանությամբ, ապա պարտավոր էր ներկայացնել որևէ, թեկուզ վարկածային, տեսակետ այդ մասին, ինչպես դա արել է Բ. Ուլուբաբյանը (էջ 306-307): Ճիշտ կլիներ, եթե ատենախոսը զբաղվեր նման խնդիրների լուսաբանմամբ և պարզաբանմամբ:

18. Ատենախոսը էջ 92-93-ում գրեթե մեկ էջ է հատկացրել՝ Հովհաննես Հասան-Ջալալյանին որպես կաթողիկոս հիշատակող վավերագրերը մեջբերելու համար, մինչդեռ կարելի էր մեկ տողով նշել, որ նա որպես այդպիսին հիշատակվում է բազմաթիվ աղբյուրներում և հղել դրանք:

19. Ատենախոսության 89-95 էջերում տարբեր գործող անձանց վերաբերյալ կատարված քննությունը Բ. Ուլուբաբյանի աշխատության 307-312 էջերի բովանդակային վերաշարադրանքն է. Բ. Ուլուբաբյանը և ատենախոսը փորձել են ճշտել հողային մի վեճի առիթով հիշատակած անձանց տվյալները: Այստեղ ատենախոսը կատարել է որոշակի հավելումներ: Օրինակ, եթե Բ. Ուլուբաբյանը Հովհաննես կաթողիկոսի մասին տեղեկությունների վերաբերյալ պարզապես հղում է աղբյուրներին (էջ 308), ատենախոսը մեջ է բերում այդ տեղեկություններն ամբողջությամբ (էջ 92-93):

20. Էջ 99-100-ում ատենախոսը երրորդ գլուխն ամփոփում է ոչ թե սեփական աշխատանքի արդյունքը ընդհարացնելով, այլ Մ. Բալայանի, Ռ. Հյուսընի և Գ. Կիակոսյանի կարծիքները մեջ բերելով:

21. Ատենախոսության 111-116 էջերում տարբեր գործող անձանց վերաբերյալ կատարված քննությունը Բ. Ուլուբաբյանի աշխատության 349-354 էջերի բովանդակային վերաշարադրանքն է, որոշակի հավելումներով, սակայն այստեղ կարևոր է այն, որ ատենախոսը հետևում է ոչ թե սեփական, այլ Բ. Ուլուբաբյանի խնդրադրմանը: Ըստ որում, արդյունքները, չնչին բացառություններով, նույնն են: Այստեղ, սակայն, կարևոր է այլ բան. 111-116 էջերում տարբեր գործող անձանց վերաբերյալ կատարված քննությունը դուրս է ատենախոսության չորրորդ գլխի («Հասան-Ջալալյան աշխարհիկ իշխանության փոխակերպման գործընթացը») տրամաբանությունից: Ի դեպ, սկսյալ ատենախոսության 111 էջից մինչև ավարտը (էջ 134) Հասան-Ջալալյան աշխարհիկ իշխանության փոխակերպման գործընթացի մասին գրեթե գրված չէ, այլ Բ. Ուլուբաբյանի օրինակով (էջ

360-370) անդրադարձ է կատարված Մեհրաբ բեկի գավակներին (էջ 119-129), Գրիգորիս (էջ 124-127), Հովհաննես (էջ 127-128) և Դավիթ (էջ 129-130) կաթողիկոսներին:

22. Որոշակիորեն հաջող են ստացվել Խաչենի Վախթանգ իշխանի չորրորդ որդու մասին վերլուծությունը (էջ 18-21), մոնղոլների արշավանքների և տիրապետության շրջանում Հասան-Ջալալ-Դոլայի գործունեությանը նվիրված էջերը (էջ 54-63), մոնղոլների դեմ 1259 թ. բռնկված ապստամբությանը Հասան-Ջալալ-Դոլայի մասնակցությունը ժխտելուն նվիրված հատվածը (էջ 63-65), Հասան-Ջալալ-Դոլայի տապանաքարի հարցի քննությունը (էջ 68-71):

Հայաստանի Հանրապետությունում Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 22-րդ կետի չորրորդ պարբերության համաձայն, ուսումնասիրելով ատենախոսությունը և այդ թեմայով հեղինակի հրատարակված աշխատանքները, ներկայացնում եմ հետևյալը:

1. Հեղինակի վեց տպագիր հոդվածները, դատելով վերնագրերից, արտացոլում են գլուխների բովանդակությունը:

2. Ատենախոսության թեման արդիական է:

3. Ատենախոսության մեջ առկա են մի շարք էական դրույթներ և եզրահանգումներ, որոնք ատենախոսինը չեն (տե՛ս դիտարկումները):

4. Ատենախոսության մեջ քննարկված թեմատիկան, ներկայացված դրույթներն ու եզրահանգումները հաճախ խարսխված են այլ հեղինակների դրույթների ու եզրահանգումների վրա, միայն մասամբ են նոր և մասամբ՝ հիմնավոր, ինչը պարզվում է ատենախոսության եզրակացություններից, որոնք այնքան էլ չեն բխում ատենախոսության վերնագրից ու նպատակից:

Ամփոփելով կարող եմ նշել, որ.

1. սույն ատենախոսության մեջ թեմատիկ ընդգրկման առումով (Հասան-Ջալալյանների տոհմի դերակատարության լուսաբանում) ատենախոսի առջև դրված նպատակը չի իրականացվել, քանի որ երկրորդ գլխի երրորդ ենթագլխում նախատեսված՝ Հասան-Ջալալ-Դոլայի դերը կամ գործունեության գնահատականը լիարժեքորեն ներկայացված չէ, այլ գլուխներում տոհմի դերի հարցերին անդրադարձ չկա, իսկ եզրակացություններում էլ միայն մեկ կետ է նվիրված այդ հարցին և այն էլ՝ բացառապես Հասան-Ջալալ-Դոլա իշխանի առումով:

2. ատենախոսության մեջ շատ հաճախ, երբ անհրաժեշտ է հեղինակային խոսք, ատենախոսը մեջ է բերում այլ ուսումնասիրողների կարծիքներ՝ առանց ցույց տալու սեփական վերաբերմունքը,

3. ատենախոսության մեջ մեծ ծավալ են կազմում աղբյուրներից մեջբերումները, որոնք ատենախոսի կողմից ըստ հարկի քննարկված չեն,

4. գլուխներում առկա են բովանդակային շեղումներ (առաջին գլխի և երկրորդ գլուխների վերջին մասերը, չորրորդ գլխի երկրորդ կեսը),

5. ատենախոսության հաջողված հատվածները բավարար չեն՝ ատենախոսությանն ընդհանուր առմամբ դրական գնահատական տալու համար:

Կարծում եմ, որ այս տեսքով ու բովանդակությամբ ատենախոսությունը չի համապատասխանում «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետին և չի կարող գնահատվել իբրև գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում կամ նոր խնդրի առաջադրում, իսկ հեղինակը չի կարող հավակնել իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.դ. Արման Սամվելի Եղիազարյան



Պ.գ.դ. Ա. Ս. Եղիազարյանի ստորագրությունը հաստատում եմ՝

004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, պ.գ.թ. Հ. Ղ. Մուրադյան



22.03.2020 թ.